Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
դեկտեմբերի 29-ի N 1878 - Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2003 թվականի
հունվարի 16-ի N 25 -Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Սույն իրավական ակտով սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) ուսումնական հաստատության (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) պրոֆեսորադասախոսական անձնակազմին (այսուհետ՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմ) ներկայացվող պահանջները:

2. Սույն իրավական ակտի իմաստով պրոֆեսորադասախոսական անձնակազմում ընդգրկվում են ուսումնական հաստատությունում գիտամանկավարժական գործունեություն իրականացնող՝ հետևյալ պաշտոններն զբաղեցնող ծառայողները՝ ուսումնական ասիստենտ, դասախոս, ավագ դասախոս, դոցենտ, պրոֆեսոր, ամբիոնի (կրթաճյուղի) և ֆակուլտետի պետեր, նրանց տեղակալներ:

3. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի պաշտոններում կարող է նշանակվել այն անձը, ով համապատասխանում է հետևյալ պահանջներից որևէ մեկին՝

1) ուսումնական ասիստենտի պաշտոնի համար՝ ունի համապատասխան մասնագիտության գծով մագիստրոսի կամ դրան համարժեք որակավորման աստիճան.

2) դասախոսի պաշտոնի համար՝

ա. ունի համապատասխան մասնագիտության գծով գիտական աստիճան,

բ. համապատասխան մասնագիտության գծով ավարտել է ասպիրանտուրան կամ հայցորդի կարգավիճակով հանձնել է որակավորման քննությունները և ունի գիտամանկավարժական աշխատանքի առնվազն մեկ տարվա ստաժ,

գ. ունի համապատասխան մասնագիտության գծով մագիստրոսի կամ դրան համարժեք որակավորման աստիճան և գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 2 տարվա ստաժ.

3) ավագ դասախոսի պաշտոնի համար՝

ա. ունի համապատասխան մասնագիտության գծով գիտական աստիճան և գիտամանկավարժական աշխատանքի առնվազն մեկ տարվա ստաժ,

բ. առնվազն 3 տարի աշխատել է որպես դասախոս և ունի գիտամեթոդական և (կամ) ուսումնամեթոդական աշխատանքներ.

4) դոցենտի պաշտոնի համար՝

ա. ունի համապատասխան մասնագիտության գծով գիտական աստիճան և գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 տարվա ստաժ,

բ. ունի համապատասխան մասնագիտության գծով դոցենտի գիտական կոչում,

գ. առնվազն 5 տարի աշխատել է որպես ավագ դասախոս և ունի գիտամեթոդական և (կամ) ուսումնամեթոդական առնվազն 4 աշխատանք.

5) պրոֆեսորի պաշտոնի համար՝

ա. ունի համապատասխան մասնագիտության գծով պրոֆեսորի գիտական կոչում,

բ. ունի համապատասխան մասնագիտության գծով դոկտորի գիտական աստիճան և դոցենտի գիտական կոչում,

գ. ունի համապատասխան մասնագիտության գծով դոկտորի գիտական աստիճան և գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 2 տարվա ստաժ,

դ. ունի համապատասխան մասնագիտության գծով գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, դոցենտի գիտական կոչում և գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 տարվա ստաժ,

ե. ունի համապատասխան մասնագիտության գծով գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և առնվազն 5 տարի զբաղեցրել է դոցենտի պաշտոն.

6) ամբիոնի պետի (պետի տեղակալի) պաշտոնի համար՝

ա. ունի համապատասխան մասնագիտության գծով դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում,

բ. առնվազն մեկ տարի զբաղեցրել է պրոֆեսորի պաշտոն,

գ. ունի համապատասխան մասնագիտության գծով գիտական աստիճան և առնվազն 3 տարի զբաղեցրել է դոցենտի պաշտոն,

դ. ունի համապատասխան մասնագիտության գծով գիտական աստիճան և գիտա-մանկավարժական աշխատանքի առնվազն 10 տարվա ստաժ.

7) ֆակուլտետի պետի (պետի տեղակալի) պաշտոնի համար՝

ա. ունի համապատասխան մասնագիտության գծով դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում,

բ. առնվազն 2 տարի զբաղեցրել է պրոֆեսորի պաշտոն,

գ. ունի համապատասխան մասնագիտության գծով գիտական աստիճան և առնվազն 5 տարի զբաղեցրել է դոցենտի պաշտոն,

դ. ունի համապատասխան մասնագիտության գծով գիտական աստիճան և գիտա-մանկավարժական աշխատանքի առնվազն 12 տարվա ստաժ:

4. Գիտական աստիճանի առկայության պահանջը պարտադիր չէ՝

1) ուսումնական հաստատությունում նախնական մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման աշխատանքներում ներգրավվող պրոֆեսորադասախոսա-կան անձնակազմի պաշտոններում նշանակվող ծառայողների համար.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 9-ի N 22-Ն որոշմամբ հաստատված ցանկով նախատեսված հատուկ առարկաների դասավանդման գործում ներգրավվող ուսումնական ասիստենտի, դասախոսի, ավագ

դասախոսի, դոցենտի և ամբիոնի (կրթաճյուղի) պետի (պետի տեղակալի) պաշտոններում նշանակվող ծառայողների համար:

5. Համատեղության կարգով կամ պայմանագրային հիմունքներով ուսումնական հաստատությունում գիտամանկավարժական գործունեությամբ զբաղվող անձանց վրա տարածվում են սույն հավելվածի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված պահանջները:

6. Ուստիկանության ուսումնական հաստատության գիտական խորհուրդը կարող է հիմնել ու վաստակաշատ գիտնականներին սահմանված կարգով շնորհել պատվավոր պրոֆեսորի կամ պատվավոր դոկտորի տիտղոս՝ ներդրած գիտամանկավարժական ավանդի և ուսումնական հաստատությանը մատուցած բացառիկ ծառայությունների համար: Պատվավոր պրոֆեսորի կամ պատվավոր դոկտորի տիտղոսը կարող է շնորհվել ուսումնական հաստատությունում գիտական գործունեություն իրականացնող՝ ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ՝ օտարերկրյա պետությունների գիտնականներին:

7. Ուստիկանությունում վարչական աշխատանքի անցած ուսումնական ասիստենտները, դասախոսները, ավագ դասախոսները, դոցենտները, պրոֆեսորները համատեղության կարգով կարող են մինչև 0,5 դրույքով պահպանել իրենց պաշտոնը և նույն դրույքի սահմաններում մասնակցել պրոֆեսորադասախոսական պաշտոնների նշանակման և առաջխաղացման գործընթացին: Լիազորությունների ավարտից հետո նրանք ուսումնական հաստատությունում ապահովվում են իրենց համապատասխան գիտամանկավարժական պաշտոնով:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ